

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Ա. Կ. ՌԱՐԵԶԻԶՅԱՆ

ԻՍՄԱՍՏԱՅԻՆ ՊԱՏՃԵՆՍԱՆ ԷՌԻԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՏԱՐԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՍՄԱՍՏԱՅԻՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆԻՑ

Համաժամանակյա հայեցակետով զուգադրվող բառամիավորներն առարկայական-տրամաբանական վերաբերության տեսակետից կարող են գտնվել համարժեք և ոչ համարժեք հարաբերության մեջ: Համարժեք հարաբերությունը միշտ չէ, որ բացարձակ է. ընդհակառակը, ավելի հաճախ այն մասնակի է, հարաբերական: Այս դեպքում համեմատվող լեզուների բառամիավորներն ամբողջ ծավալով չեն համընկնում: Եթե նկատի առնենք մաս դրանց հնչյունագրային կողմը և շարակարգային, խոսքային յուրահատկությունները, ապա կտեսնենք, որ առանձնանում են բացարձակ և մասնակի հոմանշության, համանունության և հարանունության համաժամանակյա միջլեզվային կարգերը: Ասվածը մեկնաբանելու համար ստիպված ենք դիմել տարբեր լեզուներից քաղված օրինակների. քանի որ մեկ լեզվի տվյալները մեզն հնարավորություն չեն ընձեռում:

Միջլեզվային բացարձակ հոմանիշները, մենիմաստ լինեն, թե բազմիմաստ, իմաստային ծավալով լիովին համընկնում են: Այսպես, ֆր. *ideal* – հայ. **իդեալ**, ֆր. *antique* – հայ. **անտիկ** (հնչյունագրային նմանություն), ֆր. *captiver* – հայ. **գերել**, ֆր. *officiel* – հայ. **պաշտոնական** (հնչյունագրային տարբերություն) և այլն: Բնական է, որ այս դեպքում որևէ նշանակության՝ մեկ լեզվից մյուսը փոխանցվելու մասին խոսք չի կարող:

Միջլեզվային մասնակի հոմանիշները նշանակությունների մի մասով համընկնում են, մյուսով՝ ոչ: Նշանակություններից մեկի (մի քանիսի) ընդհանրության հիման վրա տեղի է ունենում մյուսի (մյուսների) փոխանցում: Ինչպես միջլեզվային բացարձակ հոմանշության դեպքում, այնպես էլ այստեղ առկա է հնչյունագրային նմանություն կամ տարբերություն: Երկու լեզուներում հնչյունագրային նմանությամբ կապված և իմաստային կեղծ զուգորդումների առիթ տվող բառերը լեզվաբանական գրականության մեջ ստացել են «թարգմանչի կեղծ բարեկամներ» անվանումը. իսկ **հնչյունագրային նմանության** փաստը համարվել է նրանց գոյության և որևէ նշանակության մեկ այլ լեզու փոխանցվելու հիմքը: Սակայն այս հանգամանքը առաջնային է **նույնագիր լեզուներում**, օրինակ՝ լատինագիր եվրոպական լեզուներում:

Ֆրանսեզներում անգլերենի ազդեցությամբ իմաստային փոխանցումների երևան գալը բնորոշ երևույթ է, որին նպաստում է ոչ միայն լեզվական սերտ շփումը, այլև անգլերենի բառապաշարում լատինական և հին ֆրանսիական ծագում ունեցող բազմաթիվ բառերի գոյությունը: Այստեղից էլ երկու լեզուներում հնչյունագրային տեսակետից (հնչյունագրայնորեն) նման և նշանակություներով մասնակիորեն համընկնող բառերի զգալի թիվը: Իսկ որքան շատ են նման բառերը, այնքան մեծ է իմաստային փոխանցումների հավանականությունը: Օրինակ՝ անգլ. *aggressive* և ֆր. *agressif, ive* (նվաճողական, հարձակողական + *bouan* լուծ, բուռն կերպով զարգացող, հարածուն, հզոր, մեծ չափերի հասնող *economic aggressive* - բուռն կերպով զարգացող տնտեսություն, *publicité aggressive* - հզոր, մեծ չափերի հասնող գովազդ):

Ինչ վերաբերում է ոչ նույնագիր լեզուներին, ապա այստեղ առաջնային է դառնում իմաստային մասնակի զուգադիպությունը՝ անկախ հնչյունագրային նմանությունից: Այսպես, քաղաքացի բառը ֆրանսերեն *citoyen*-ի հետ ունեցած «քաղաքի բնակիչ» ընդհանուր նշանակության հիման վրա և վերջինիս ազդեցությամբ XIX դարում սկսել է զործածվել նոր իմաստով՝ «որևէ պետության մեջ ապրող անձ՝ որոշակի պարտականություններով և իրավունքներով», անկախ այն բանից քաղաքում է բնակվում, թե գյուղում: *Citoyen* գոյականն այս նշանակությունը ձեռք էր բերել ֆրանսիական մեծ հեղափոխության օրերին (1789-1799), երբ յուրաքանչյուր ոք համարվում էր «հանրապետության քաղաքացի»: Վ. Գյուգոյի «Իննսուներեքը» վեպում հանրապետական վաշտի հրամանատարը, դիմելով գյուղացի կնոջն, ասում է՝ «Եկեք, տիկին քաղաքացի»:

Վեճերի առիթ է դարձել այն հարցը, թե ինչպես պետք է կոչվեն մեկ լեզվից մյուսին անցնող նշանակությունները կամ նրբիմաստները: Այսպես՝ Վ. Վինոգրադովը¹, է. Գաուգենը², Լ. Դոուլանը³ և ուրիշներ համապատասխան դեպքերը նշելու համար գործածում են «իմաստային փոխառություն» տերմինը, Ս. Ուլմանը՝ «իմաստային ընթրինակում», Յու. Սորոկինը՝ «իմաստային մակածություն (ինդուկցիա)»: Լեզվաբանների մեկ այլ խումբ՝ Ե. Շանսկի, Ռ. Բուդաղով⁴, Լ. Գալդի⁵, Կ. Ֆլեքենշտայն⁶, Լ. Պոնոմարենկո⁷, վերոհիշյալ դեպքերն անվանում են «իմաստային պատճենումներ»: Լեզվաբանների առաջին խումբը հակված է պատճենման երևույթը սահմանափակել բառի ձևաբանական կառուցվածքի կրկնօրինակման շրջանակներով: Այնինչ, մեզ թվում է, որ պատճենման երևույթը պետք է դուրս բերել լոկ ձևաբանական կառուցվածքի կրկնօրինակման շրջանակներից: Սույն տեսակետի հիմքում ընկած է մեր այն համոզմունքը, որ եթե կարելի է խոսել քառակազմական կառուցվածքի պատճենման մասին, ապա կարելի է խոսել նաև իմաստային կառուցվածքի պատճենման մասին, երբ իմաստային մասնակի նմանության (մեծ մասամբ բուն նշանակություն-

(ների) հիմքի վրա մեկ լեզվից մյուսին են փոխանցվում նոր նշանակություններ կամ նրբիմաստներ (աստվծապես փոխաբերական): Այսպիսով, առաջին դեպքում պատճենվում են քառակազմական կառուցվածքը, այն կազմող քաղաղիչների կապը, երկրորդ դեպքում պատճենվում են քառի իմաստային կառուցվածքը, այն կազմող նշանակությունների կամ նրբիմաստների կապը:

Միջլեզվային համանունության դեպքում երկու լեզուների քառերը ձևով նման են, իսկ իմաստով՝ քոլորովին տարբեր, այսինքն առկա է հնչյունագրային նմանություն և իմաստային քաջարժակ տարբերություն: Նշենք, որ հնչյունական կամ գրային նմանությունն այստեղ կատարյալ չէ, այլ հարաբերական, քանի որ խոսքը ոչ թե ներլեզվային, այլ միջլեզվային համանունների մասին է: Այսպես, ֆր. *soda* և հայ. **սողա** քառերը միջլեզվային համանուններ են, որովհետև իմաստային որևէ ընդհանրություն չունեն, որևէ նշանակությամբ չեն համընկնում: Եթե հայերենում **սողա**-ն գործածվում է թշկության և խոհարարության մեջ օգտագործվող քիմիական նյութը նշելու համար, ապա ֆրանսերեն *soda* – ն ունի քոլորովին այլ նշանակություն՝ որևէ մրգատիություն ու զագով պատրաստված ոչ ոգելից խմիչք, լիմոնադի մի տեսակը: Քիմիական նյութը նշելու համար ֆրանսիացին գործածում է *sodium* տերմինը:

Լեզուների տվյալները զայիս են հաստատելու, որ միջլեզվային համանունների գոյությամբ պայմանավորված իմաստային փոխանցումները եւ կարող են ամրագրվել, ինչպես միջլեզվային մասնակի հոմանշության հետևանքով երևան եկածներից շատերը: Այսպես, անգլերեն *partition* քառը նշանակում է «քաժանում, մասնատում, անդամատում»: Մինչև վերջերս ֆրանսերեն զուգահեռ գոյականը *partition* անգլերեն քառի հետ կազմում էր միջլեզվային համանունների մի զույգ, քանի որ ուներ միայն երաժշտական «պարտիտուրա» տերմինի նշանակությունը, որը ոչնչով չի առնչվում անգլերեն քառի իմաստին: Սակայն ձևական նմանության հիմքի վրա անգլերեն գոյականի նշանակությունը վերջին տարիներին փոխանցվել է ֆրանսերեն քառին՝ որպես իմաստային նորաբանություն: Այժմ ֆրանսիական մամուլում այս քառը հանդիպում է «տարածքի, տարածաշրջանի քաղաքական բաժանում մասնատում» (շառակությամբ *partition d'un pays, d'une île* – որևէ երկրի, կղզու մասնատում քաժանում քաղաքական տարբեր տնօրինության տակ որովոր շրջանների): Ավելացնենք, որ նոր նշանակությունն արդեն արձանագրված է "Պ. Ժյոթերի նորաբանությունների քառաբանում":

Միջլեզվային հարանունության մասին հատուկեմտ նշումներ կան մասնագիտական գրականության մեջ: Չատկապես չի չղափվում այն կարևոր հարցը, թե ինչ սկզբունքով պետք է ասիմանագատել միջլեզվային հարանունությունն ու համանունությունը: Միջլեզվային հարանունության դեպքում երկու լեզուներում ունենք մոտ, քայց ոչ նույնական արտասանություն ունեցող

բառեր, որոնք իմաստով բոլորովին տարբեր են: Սակայն, ինչպես արդեն նշվեց, միջլեզվային համանունության դեպքում ևս հնչյունագրային նմանությունը բացարձակ չէ: Սա նշանակում է, որ ծնական չափանիշը չի կարող միջլեզվային համանունության և հարանունության սահմանազատման հիմք ծառայել: Սահմանազատիչ արժեք չունի նաև իմաստային չափանիշը, քանի որ երկու դեպքում էլ բառերն իմաստով միանգամայն տարբեր են: Սինչդոն, եթե միջլեզվային համանունության դեպքում երկու լեզուների բառերը մեծ մասամբ ունեն միևնույն ծագումը (պատահական զուգադիպությունները հազվադեպ են), ապա միջլեզվային հարանունության դեպքում այդ բառերը ծագումով նույնը չեն: Հենց այս իրողությունն էլ, այսինքն ստուգաբանական սկզբունքը, մեր կարծիքով, կարող է դրվել միջլեզվային համանունության և հարանունության սահմանազատման հիմքում: Այսպես, ֆր. rayon (ճառագայթ) և ռուս. раён բառերը միջլեզվային հարանուններ են և կազմում են թարգմանչի կեղծ բարեկամների մի զույգ, որ կարող է չփոթեցնել ինչպես ֆրանսերենով, այնպես էլ ռուսերենով արտահայտվողին, այսինքն երկկողմանի է, հակադարձ:

Միջլեզվային համանունության և հարանունության հետևանքով մեկ լեզվից մյուսին փոխանցվող նշանակությունները կամ սխալ գործածության դեպքերը չեն կարող իմաստային պատճենումներ համարվել, քանի որ իմաստային մասնակի նմանություն այստեղ չկա, հետևաբար չկա նաև տվյալ բառի իմաստային կառուցվածքը ներկայացնող մեկից ավելի նշանակությունների կամ նրբիմաստների կայուն կապի ընդօրինակում, որ վերևում պատճենման հիմք ընդունեցինք: Իսկ սա նշանակում է, որ **իմաստային պատճենումների ոլորտը պետք է սահմանափակել միջլեզվային մասնակի հոմանշության հետևանքով փոխանցվող նշանակություններով, իսկ միջլեզվային համանունության և հարանունության արդյունք հանդիսացող նոր նշանակությունները պետք է դիտել իմաստային փոխառություններ:**

Իմաստային փոխառություններ ենք դիտում նաև այն դեպքերը, երբ երկու լեզուների բառամիավորները հնչյունագրային կամ իմաստային որևէ ընդհանրություն չունեն, երբ բացառվում է իմաստային կառուցվածքի կրկնօրինակումը, և որևէ օտար նշանակություն պարզապես տրվում է մայրենի այս կամ այն բառին. օր. **այլալուկ** – hybride (խառնածին) [ՆՅԲ, որ կարելի է այլալուի, յեդյեդուկ, անկեալ ընդ այլալութեամբ, փոփոխական], **արմ** – аром (մայր շնչերակ) [ՆՅԲ, նոյն ընդ արմատ իրոք կամ նմանութեամբ, էԱԲ, ծառաբնի ստորին արմատամբ՝ մասը], **երևակ** – фигура (անխոս դերասան) [ՆՅԲ, տեսիլ, երևոյթ, պատկեր, նշանակ, էԱԲ, երևույթ, արտաքին պատկեր, տեսիլք] և այլն:

Իմաստային պատճենումներից շատերը կատարվում են մտավորականության ներկայացուցիչների կողմից գիտակցաբար: Քիչ չեն նաև չգիտակցված փոխանցումները, մասնավորապես խոսակցական լեզվում, երբ երկու լեզուներ

րի բառերը թարգմանչի կեղծ բարեկամների դերում են: Այստեղ կարևոր է շեշտել այն միտքը, որ անկախ նրանից, թե պատճենված կամ փոխառված նշանակություններն ինչ ճանապարհով են մուտք գործում լեզու գիտակցված ընդօրինակումով, թե պատահաբար, երևան գալու պահին, գրեթե առանց բացառության, գտնվում են շեղումների ոլորտում: Եվ ժամանակի ընթացքում է միայն, որ գործածության ուժով այդ իմաստային շեղումը կամ սխալը «մաշվում է», աստիճանաբար դառնում աննկատ և վերջապես ընդունելի, նույնիսկ օրինաչափ: Ասվածից, անշուշտ, պետք չէ հետևցնել, թե իմաստային յուրաքանչյուր փոխանցում ի վերջո անխուսափելիորեն մուտք է գործում տվյալ լեզվի իմաստային համակարգ: Ընդհակառակը, դրանց մի զգալի մասն այդպես էլ մնում է սխալ գործածությունների ոլորտում: Եվ որքան էլ բառարանագրին, բառագետին, գրողին, թարգմանչին կամ լրագրողին բնական ու անխուսափելի թվան իմաստային պատճենումներն ու փոխառությունները, լեզուն ու ժամանակն են որոշում դրանց հետագա գոյության նպատակահարմար կամ ավելորդ լինելը:

Շարադրվածի հիման վրա տալիս ենք իմաստային պատճենման հետևյալ սահմանումը.

Իմաստային պատճենումն օտար բառի իմաստային կառուցվածքի, այն կազմող նշանակությունների կամ նրբիմաստների կայուն կապի կրկնօրինակման արդյունքն է, իմաստային մասնակի զուգադիպության հիման վրա մեկ լեզվից մյուսը փոխանցվող որևէ նոր նշանակություն կամ նրբիմաստ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Виноградов В.В. Очерки по истории русского литературного языка XVIII-XIX вв, Москва, 1938, стр. 162.
2. Haugen E. The Analysis of Linguistic Borrowing. "Language", 1950, vol 26, N2, Philadelphia, p.224.
3. Deroz L. L'emprunt linguistique. Paris, 1956, p. 9.
4. Ullmann S. Precis de semantique française. Paris, 1952, p. 204.
5. Сорокин Ю.С. Развитие словарного состава русского литературного языка, 30-90-е годы XIX века, М-Л, 1965, стр. 165-166.
6. Шанский Н.М. Лексические и фразеологические кальки в русском языке, "Русский язык в школе", 1955, N3, стр. 29.
7. Будагов Р.А. Введение в науку о языке, Москва, 1958, стр. 111-113.
8. Гальди Л. Слова романского происхождения в русском языке, IV международный съезд славистов, изд. Московского гос. университета, 1958, стр. 66-67.
9. Флекенштейн К. Кальки по немецкой модели в современном русском литературном языке. Автор. канд., дис., Москва, 1963, стр. 4.
10. Пономаренко Л.А. Калькирование как вид влияния одного языка на другой. Автор. канд., дис., Киев, 1965, стр. 5.
11. Gilbert P. Dictionnaire des mots nouveaux. Paris, 1971.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ՆՅՐ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հ. 1-2, 1836-1837:
 ԵՄԲ - Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:

А. БАРЛЕЗИАН

СУЩНОСТЬ СЕМАНТИЧЕСКОГО КАЛЬКИРОВАНИЯ И ЕГО ОТЛИЧИЕ ОТ СЕМАНТИЧЕСКОГО ЗАИМСТВОВАНИЯ

Статья посвящена вопросу разграничения таких лингвистических понятий, какими являются семантическое калькирование и семантическое заимствование. Утверждается мысль о том, что семантическое калькирование должно ограничиваться теми новыми значениями или оттенками значений, которые являются следствием калькирования семантической структуры иноязычного слова при наличии общности одного или нескольких значений, то есть в тех случаях, когда налицо **межъязыковая частичная синонимия**.

Что же касается случаев перехода значений из одного языка в другой на основе **межъязыковой омонимии** и **межъязыковой паронимии**, то их следует отнести к разряду семантических заимствований.

A. BARLEZIAN

THE ESSENCE OF SEMANTIC LOAN-TRANSLATION AND ITS DELIMITATION FROM SEMANTIC BORROWING

The subject matter of the article deals with the problem of discrimination between such linguistic concepts as semantic loan-translation and semantic borrowing. It is suggested that semantic loan-translation must be restricted by the new meanings or shades of meaning which are the result of loan-translation of the semantic structure of the foreign words possessing one or several common meanings, i.e. in those cases when **interlingual partial synonymy** is obvious.

In connection with the transference of meanings from one language into another based on **interlingual homonymy** and **paronymy**, they should be regarded as the cases of semantic borrowing.